ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«07» ապրիլի 2026թ. ՆՄՈ/196-Ա

ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՈՒՄ ՇՏԱԲԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, 19-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հունվարի 22-ի N46-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով սահմանված N1 հավելվածի 6-րդ կետի 4-րդ ենթակետով և 18-րդ կետով, հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության համակարգերի նախապատրաստման 2026 թվականի հիմնական միջոցառումների պլան»-ի 5.1.1-ին կետի պահանջները.

որոշում եմ

1. 2026 թվականի ապրիլի 15-ին Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի ղեկավարությամբ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզում անցկացնել «Ախուրյանի ջրամբարի պատվարի փլուզման սպառնալիքի դեպքում բնակչության պաշտպանության միջոցառումների կազմակերպումը» թեմայով շտաբային ուսումնավարժություն:

2. Շտաբային ուսումնավարժության նախապատրաստման և անցկացման նպատակով նշանակել՝

1) Շտաբային ուսումնավարժության ղեկավարի տեղակալ՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի տարահանման հանձնաժողովի նախագահ, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի տեղակալին (Արամ Գրիգորյան).

2) Շտաբային ուսումնավարժության ղեկավարման շտաբի պետ՝ Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության Արմավիրի

մարզային փրկարարական վարչության պետին (փրկարար ծառայության գնդապետ Գևորգ Հակոբյան).

3. Հաստատել՝

1) Շտաբային ուսումնավարժության ղեկավարման խմբի կազմը՝ համաձայն հավելված N 1-ի.

2) Շտաբային ուսումնավարժության ղեկավարման շտաբի կազմը՝ համաձայն հավելված N 2-ի.

3) Շտաբային ուսումնավարժության միջնորդական խմբի կազմը՝ համաձայն հավելված N 3-ի:

4. Շտաբային ուսումնավարժությանն ընդգրկել՝

1) Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումներին.

2) Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի տարահանման հանձնաժողովին.

3) Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության Արմավիրի մարզային փրկարարական վարչությանը.

4) Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի Լուսագյուղ, Ապագա և Մեծամոր համայնքի Արգավանդ, Մարգարա, Հայկավան, Բամբակաշատ բնակավայրերը:

5. ՈՒսումնավարժության ղեկավարի տեղակալին՝ ուսումնավարժության նախապատրաստման և անցկացման համար ապահովել անհրաժեշտ նյութատեխնիկական միջոցներ:

6. Ուսումնավարժության ղեկավարման շտաբի պետին՝

1) մինչև 2026 թվականի ապրիլի 9-ը կազմել և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի հաստատմանը ներկայացնել ուսումնավարժության նախապատրաստման և անցկացման փաստաթղթերի փաթեթը.

2) համաձայն ուսումնավարժության օրացուցային պլանի կազմակերպել միջոցառման մասնակիցների նախապատրաստումը՝ մասնակիցներին ցուցաբերելով անհրաժեշտ մեթոդական օգնություն.

3) 2026 թվականի ապրիլի 13–ին զեկուցել ուսումնավարժության անցկացման պատրաստականության մասին:

7. ՈՒսումնավարժության մասնակիցներին՝

1) Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության Արմավիրի մարզային փրկարարական վարչության հետ ճշգրտել «Գարնանային վարարումների, ջրհեղեղների և սելավների դեպքում գործելու» պլանով նախատեսված միջոցառումները և փոխգործողությունների պլանները.

2) ուսումնավարժության ընթացքում իրականացված միջոցառումների մասին ներկայացնել համապատասխան զեկույցներ.

3) գործնական միջոցառումների ընթացքում պահպանել անվտանգության կանոնները:

8. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետին:

9. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

07.04.2026

X

ՎԱՀՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: KHACHATRYAN VAHRAM 2902840179 Վ.ԽԱՉԱՏՐՅԱՆ

Հավելված N 1
ՀՀ Արմավիրի մարզպետի
2026թվականի ապրիլի 07-ի
N Մ1/1964-Ա որոշման

ԿԱԶՄ
2026 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 15-ԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՈՒՄ ԱՆՑԿԱՑՎԵԼԻՔ ՇՏԱԲԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐՄԱՆ ԽՄԲԻ

Հ/հ	Անուն, Ազգանուն	Զբաղեցրած պաշտոնը
1.	Վահրամ Խաչատրյան	ՀՀ Արմավիրի մարզպետ՝ ուսումնավարժության ղեկավար
2.	Արամ Գրիգորյան	ՀՀ Արմավիրի մարզպետի տեղակալ, մարզի տարահանման հանձնաժողովի նախագահ՝ ուսումնավարժության ղեկավարի տեղակալ
3.	Գևորգ Հակոբյան	ՀՀ ՆԳՆ ՓԾ Արմավիրի մարզային փրկարարական վարչության պետ՝ ուսումնավարժության ղեկավարման շտաբի պետ

Восстановимая подпись

ԱՐԱՄ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Подписано: HOVHANNISYAN ARAM 3812640023

Գլխավոր քարտուղար՝ **Ա. Հովհաննիսյան**

Հավելված N 2
ՀՀ Արմավիրի մարզպետի
2026 թվականի ապրիլի 07-ի
N Մ/196-Ա որոշման

ԿԱԶՄ
2026 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 15-ԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՈՒՄ ԱՆՑԿԱՑՎԵԼԻՔ ՇՏԱԲԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐՄԱՆ ՇՏԱԲԻ

Հ/հ	Անուն, Ազգանուն	Զբաղեցրած պաշտոնը
1.	Գևորգ Հակոբյան	Արմավիրի մարզային փրկարարական վարչության պետ՝ ուսումնավարժության ղեկավարման շտաբի պետ
2.	Մուշեղ Պետրոսյան	Արմավիրի մարզային փրկարարական վարչության պետի տեղակալ՝ խաղարկման և վերլուծության խմբի ղեկավար
3.	Գառնիկ Մկրտչյան	Արմավիրի մարզային փրկարարական վարչության ԲՊԲ պետ, խաղարկման և վերլուծության խմբի անդամ
4.	Գառնիկ Ղուկասյան	Արմավիրի մարզային փրկարարական վարչության ԲՊԲ ավագ հրահանգիչ, խաղարկման և վերլուծության խմբի անդամ
5.	Սևակ Հովհաննիսյան	Արմավիրի մարզային փրկարարական վարչության ԲՊԲ ավագ հրահանգիչ, խաղարկման և վերլուծության խմբի անդամ

Восстановимая подпись

ԱՐԱՄ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Подписано: HOVHANNISYAN ARAM 3812640023

Գլխավոր քարտուղար՝ **Ա. Հովհաննիսյան**

Հավելված N 3
ՀՀ Արմավիրի մարզպետի
2026 թվականի ապրիլի 07-ի
N Մ/196-Ա որոշման

ԿԱԶՄ
2026 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 15-ԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՈՒՄ ԱՆՑԿԱՑՎԵԼԻՔ ՇՏԱԲԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՄԻՋՆՈՐԴԱԿԱՆ ԿԱԶՄԻ

Հ/հ	Ուսումնավարժության մասնակիցներ	Միջնորդներ	
		Զբաղեցրած պաշտոնը	Անուն Ազգանուն
1.	Արմավիրի մարզպետի աշխատակազմի՝ առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի, ֆինանսական, գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության, քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչություններ	Արմավիրի մարզային փրկարարական վարչության ԲՊԲ հրահանգիչ	Արտակ Առաքելյան
2.	Արմավիրի մարզի տարահանման հանձնաժողով, Արաքս համայնքի Լուսագյուղ, Ապագա և Մեծամոր համայնքի Արգավանդ, Հայկավան, Բամբակաշատ, Մարգարա բնակավայրեր	Արմավիրի մարզային փրկարարական վարչության ԲՊԲ ավագ հրահանգիչ	Գուրգեն Հարությունյան
3.	ՀՀ ՆԳՆ ոստիկանության ՔՈԳՎ Արմավիրի ՄՎ, «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ Արմավիրի ԳԳՄ, ՀԷՑ «Մուսալեռ» ՓԲԸ Արմավիրի ՇԷՑ, «Վեոլիա ջուր» ՓԲԸ «Հարավ շահագործման տնօրինություն», «Արմավիրի» և «Էջմիածին» շահագործման տեղամաս, «Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ Արմավիրի ցանցերի շահագործման թիմ ՀՀ ԱՆ ՀՎԿԱԿ ՊՈԱԿ-ի Արմավիրի մասնաճյուղ, ՀՀ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի Արմավիրի մարզային կենտրոն	Արմավիրի մարզային փրկարարական վարչության ԲՊԲ հրահանգիչ	Ավետիք Հարությունյան

Восстановимая подпись

ԱՐԱՄ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Подписано: HOVHANNISYAN ARAM 3812640023

Գլխավոր քարտուղար՝ Ա. Հովհաննիսյան